


“

ԻՊԱՍ զեկույց.  
ՀՀ տեղական  
ինքնակառավարման  
մարմինների դեմ  
դատական գործերի  
ուսումնասիրություն





Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին ու զեկույցի հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների հետ:

*Սույն զեկույցի հեղինակներն են՝ Աննա Մելիքյանը, Նինա Հակոբյանը:*

*Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել են Կարինե Ավանեսյանը, Լիլիթ Գալստյանը, Լուիզա Հովհաննիսյանը և Վանատուր Շերենցը:*

## Բովանդակություն

ԱՍՓՈՓԱԳԻՐ .....	4
I. Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ .....	6
II. Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ .....	15
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ .....	22

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը 2020թ. մարտի 1-ից 2021թ. մարտի 31-ը ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Հանրային կառավարման համակարգի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են 22 տարբեր համայնքների դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. մինչև հունիսի 30-ը դատարան մուտքագրված և նույն ժամանակահատվածում կայացված 37 վճիռներ: Դիտարկված գործերից 22-ով հայցերը բավարարվել են ամբողջությամբ (60%), 1-ով՝ մասնակի, իսկ 14-ով՝ մերժվել (38%):

Դիտարկված գործերը վերաբերել են շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելուն, հիմնավորող փաստաթղթերի չպահպանման պարագայում հողհատկացման փաստը հաստատելուն, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացմանը, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելուն, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքից ազատելուն, կադաստրային քարտեզում տվյալներ տեղադրելուն, հողամասի գործառնական, նպատակային նշանակությունը փոփոխելուն, անգործունակ քաղաքացու նկատմամբ խնամակալ սահմանելուն, խնամարկյալի գույքը տնօրինելուն, գույքային պարտավորությունների գանձմանը, շինարարական թույլտվության դադարեցմանը, սեփականության իրավունքի վիճարկմանը, ուղղակի վաճառքի կարգով հողամաս տրամադրելուն և այլն:

Դիտարկված գործերից ճնշող մեծամասնության դեպքում՝ 81%, Հայցվորը ներկայացված է եղել փաստաբանի միջոցով և ապահովել է մասնակցությունը դատական նիստերին գործերի 70%-ի դեպքում: Մինևույն ժամանակ Պատասխանող համայնքների ներկայացուցիչները գործի քննությանը չեն մասնակցել դիտարկված գործերի մեծամասնության՝ գործերի 65%-ի դեպքում: Դրանցից 71%-ով հայցը բավարարվել է ամբողջությամբ:

Դիտարկված գործերից 70%-ի դեպքում Պատասխանողի կողմից ներկայացվել է առարկություն: Դիտարկված գործերից 9-ով Պատասխանողը չի ապահովել ներկայություն և չի հայտնել որևէ դիրքորոշում: Դրանցից միայն 6-ով է Դատարանը բավարարել հայցը, իսկ 3-ով՝ մերժել:

Դիտարկված գործերից 5-ով Դատարանն անդրադարձել է վարույթի իրականացման ժամկետների պահպանման խնդրին, որից 4-ի դեպքում արձանագրել է խախտում<sup>1</sup>: Նշված

<sup>1</sup> ՎԴ/4941/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930979](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930979); ՎԴ/9360/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939778](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939778); ՎԴ2/0257/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410); ՎԴ5/0051/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931322](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931322)

գործերը վերաբերել են վարչական պատասխանատվության ենթարկելուն՝ երկու դեպքում շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելուն, մեկ դեպքում՝ առանց համապատասխան թույլտվության՝ ժամը 24:00-ից հետո աշխատեցնելուն, իսկ մյուս դեպքում՝ առանց թույլտվության բացօթյա առևտրով զբաղվելուն:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով վարչարարության խնդիրներ առավել հաճախ են հանդիպել: Դիտարկված գործերից 12-ը վերաբերել են ՎԻՎ ՀՀ օրենսգրքով նախատեսված իրավախախտումները կատարելու համար նշանակված վարչական տույժերի վիճարկմանը: Դրանցից 11-ը բավարարվել են ամբողջությամբ:

Դիտարկված գործերից մի քանիսով Դատարանը փաստել է, որ Պատասխանող վարչական մարմինները թերացել են զանցակազմի սուբյեկտի որակման հարցում: Նշված խնդիրը հանդիպել է իրավաբանական անձին և իրավաբանական անձի տնօրենին պատասխանատվության ենթարկելու դեպքում:

Դիտարկված գործերով Դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինը պատշաճ չի իրականացնում ապացույցների հավաքագրումը և գնահատումը: Այդպես, ըստ Դատարանի, ներկայացված ողջ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ չէ, թե ենթադրյալ վարչական իրավախախտման կատարման վայրում կառուցվել է արդյո՞ք շենք կամ շինություն՝ վերգետնյա և ստորգետնյա կառուցվածքներ ունեցող շինարարական օբյեկտ, թե՛ ոչ կամ, առհասարակ, իրականացված աշխատանքների համար արդյո՞ք անհրաժեշտ է շինարարության թույլտվություն, թե՛ ոչ: Ավելին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ լուսանկարից պարզ չէ, թե ե՞րբ է կատարվել լուսանկարահանումը և ըստ այդմ՝ չի հիմնավորվում Հայցվորի կողմից վերագրվող վարչական իրավախախտում թույլ տալու փաստը: Այս առումով Դատարանն առավել հաճախ նկատել է, որ իրավախախտման փաստի մասին վկայող լուսանկարները պատշաճ չեն կատարվում, ինչպես նաև իրավախախտման վերաբերյալ արձանագրությունները կազմվում են օրենքի խախտմամբ, այդ թվում՝ ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ:


Մի քանի գործով Դատարանն արձանագրել է լսված լինելու իրավունքի խախտում, այդ թվում՝ լսումների ոչ պատշաճ ծանուցման փաստեր:

Դիտարկված գործերից մի քանիսում Դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինը՝ Համայնքի ղեկավարը կիրառել է գործառույթ, որն օրենքով իրեն վերապահված չէ: Մեկ այլ գործով Դատարանը նշել է, որ գործը քննող տեղական ինքնակառավարման մարմինը կիրառել է պատասխանատվության միջոց, որը նախատեսված չէ որոշմամբ վկայակոչված նորմով, ինչպես նաև իրավասու չէր այդ նորմով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննել, ինչով պայմանավորված հստակ չէ, թե վարչական ակտի հասցեատիրոջ վրա կոնկրետ ինչ պարտականություն է դրվում:

Արձանագրվել է նաև հայեցողական լիազորությունների խախտում: Գործերից մեկով վարչական մարմինը վարչական տույժ է կիրառել օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափով՝ առանց հիմնավորելու:

**I. Դիտարկված գործերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ**

Օրագրի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ տարբեր համայնքների դեմ բերված հայցերով 2019թ. և 2020թ. մինչև հունիսի 30-ը դատարան մուտքագրված և նույն ժամանակահատվածում կայացված 37 վճիռներ: Դիտարկված գործերից 22-ով հայցերը բավարարվել են ամբողջությամբ (60%), 1-ով՝ մասնակի, իսկ 14-ով՝ մերժվել (38%):



Դիտարկված գործերից մեկով վարույթը մի մասով կարճվել է, մի մասով կայացվել է վճիռ<sup>2</sup>:

Դիտարկված գործերը վերաբերել են՝


- 11 գործ՝ շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելուն,
- 8 գործ՝ հիմնավորող փաստաթղթերի չպահպանման պարագայում հողհատկացման փաստը հաստատելուն,
- 4 գործ՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացմանը,
- 3 գործ՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելուն,
- 1 գործ՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքից ազատելուն,
- 1 գործ՝ կադաստրային քարտեզում տվյալներ տեղադրելուն,
- 1 գործ՝ հողամասի գործառնական, նպատակային նշանակությունը փոփոխելուն,
- 1 գործ՝ անգործունակ քաղաքացու նկատմամբ խնամակալ սահմանելուն,
- 1 գործ՝ խնամարկյալի գույքը տնօրինելուն,
- 1 գործ՝ գույքային պարտավորությունների գանձմանը,
- 1 գործ՝ շինարարական թույլտվության դադարեցմանը,
- 1 գործ՝ կոյուղաջրերի անցկացման կարգի պահպանմանը,
- 1 գործ՝ սեփականության իրավունքի վիճարկմանը,
- 1 գործ՝ ուղղակի վաճառքի կարգով հողամաս տրամադրելուն,

<sup>2</sup> ՎԴ/7316/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937671](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937671)


- 1 գործ՝ վերանորոգման աշխատանքների թույլտվություն տրամադրելուն:

Դիտարկված գործերն առնչվել են մարդու իրավունքների հետևյալ խնդիրներին՝ պատշաճ վարչարարության իրականացում, այդ թվում՝ լսված լինելու իրավունք, սեփականության իրավունք, օրինականության և որոշակիության սկզբունքեր և այլն:

Դիտարկված գործերից 32-ով (87%) Հայցվորները եղել են ֆիզիկական անձինք, 4-ով (11%)՝ առևտրային կազմակերպություններ, իսկ մնացած դեպքերում՝ անհատ ձեռներեց:




Հայցվորները դիտարկված 37 գործից 30-ով (81%) ունեցել են փաստաբան ներկայացուցիչ, որից 11-ի դեպքում ներկայացուցչի փաստաբան լինելու մասին նշում առկա չէր վճռում, թեև վերջինիս անունն առկա է փաստաբանների ցանկում: Նշված գործերից մեկով Հայցվորն անգործունակ է եղել, նրան ներկայացրել են ն՝ օրինական ներկայացուցիչը, ն՝ փաստաբանը<sup>3</sup>: 2 գործով (5%) Հայցվորը ներկայացված է եղել տնօրենի կամ հենց անհատ ձեռներեցի կողմից, իսկ 1 (3%) գործով Հայցվորն ունեցել է այլ տեսակի ներկայացուցիչ: 4 գործով (11%) Հայցվորը ներկայացուցիչ չի ունեցել, որոնցից 2 գործով հայցն ամբողջությամբ բավարարվել է, իսկ 2-ով՝ մերժվել:




Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով գործի քննությանը մասնակցել է դիտարկված գործերից միայն 26-ով (70%), որոնցից 14-ը բավարարվել են ամբողջությամբ կամ մասնակի, իսկ 12-ը՝ մերժվել:


<sup>3</sup> ՎՊԵ/0030/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930788](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930788)



Պատասխանողը գործի քննությանը չի մասնակցել դիտարկված գործերի մեծամասնության դեպքում՝ 24 գործ (65%)<sup>4</sup>: Դրանցից 17-ով (71%) հայցը բավարարվել է ամբողջությամբ:



Հատկանշական է, որ դիտարկված գործերից միայն 26-ով (70%) է Պատասխանողի կողմից ներկայացվել առարկություն:




Այն 11 գործերից, որոնցով առարկություն չի ներկայացվել, Դատարանի կողմից ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել են 8-ը:

Առարկություն ներկայացվելու դեպքում այն հիմնականում եղել է հայցադիմումի պատասխանի կամ գրավոր առարկության տեսքով:

<sup>4</sup> Երեք գործով նշում առկա չէ:





Պատասխանողի կողմից մասնակցություն չապահովված գործերից /24 գործ/ 9-ով Պատասխանողը չի ներկայացրել առարկություն: Այսինքն, դիտարկված գործերից 9-ով Պատասխանողը չի ապահովել ներկայացուցչություն և չի հայտնել որևէ դիրքորոշում: Հատկանշական է, որ դրանցից միայն 6-ով է Դատարանը բավարարել հայցը, իսկ 3-ով՝ մերժել:

Ավելին, գործերից մեկով Դատարանը՝ Պատասխանողի կողմից դատարան հայցադիմումի պատասխան չներկայացնելը գնահատել է որպես Պատասխանողի կողմից Հայցվորի վկայակոչյալ փաստերի ընդունում<sup>5</sup>:

Դիտարկված գործերից 8-ով (22%) Պատասխանողը լրիվ ընդունել է հայցապահանջը: Հատկանշական է, որ նշված 8 գործերից մեկով Դատարանը հայցը այնուամենայնիվ մերժել է<sup>6</sup>: Նշված գործերից 5-ը վերաբերել են հողահատկացման մատյանների բացակայության պատճառով հողահատկացման հիմքերի վերականգնման անհնարինությանը, ուստի և վարչական ակտի ընդունմանը: Նման պարագայում երկու կողմն էլ ապավինում են դատարանի որոշմանը, քանի որ դատարանի կողմից փաստի ճանաչումից բացի այլ մեխանիզմ առկա չէ: Վերը նշված 8-ը գործից մեկը վերաբերել է երկրաշարժից տուժած անձանց տնահատկացման ցուցակում ներգրավելուն<sup>7</sup>, մեկ այլ գործ՝ շինարարական թույլտվության դադարեցմանը՝ քաղաքացիների բողոքների հիման վրա<sup>8</sup>, իսկ մեկը՝ սեփականության իրավունքից հրաժարվելու մասին կեղծ դիմումի հիման վրա սեփականությունը համայնքի սեփականություն ճանաչելուն<sup>9</sup>:


<sup>5</sup> ՎԴ/3050/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933110](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933110)

<sup>6</sup> ՎԴ/1596/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931543](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931543)

<sup>7</sup> ՎԴ5/0013/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930462](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930462)


<sup>8</sup> ՎԴ/1759/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931722](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931722)

<sup>9</sup> ՎԴ6/0041/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933929](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933929)




Դիտարկված գործերից 4-ի դեպքում (11%) հայցը վերադարձվել է՝ հետևյալ հիմնավորումներով.

- 3 գործով՝ բացակայել են հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողի և երրորդ անձանց կողմից, օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը կամ ապացույց առ այն, որ պատասխանողի կամ դատավարության մասնակիցների բնակության (գտնվելու) վայրով հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենների հանձնումն անհնարին է իրականացնել;
- 1 գործով՝ չեն պահպանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով /հետայսու՝ նաև Օրենսգիրք/ սահմանված հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ հայցադիմումում չեն նշվել հայցվորի անձնական տվյալները, պատասխանողի գտնվելու վայրը, ինչը հիմք է հայցադիմումն Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով վերադարձնելու համար:




4 գործով (11%) ներկայացվել է բացթողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն<sup>10</sup>:

<sup>10</sup> ՎԴ/7316/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937671](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937671); ՎԴ5/0200/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941734](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941734); ՎԴ6/0041/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933929](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933929); ՎԴ5/0030/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930788](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930788)



Դրանցից 3-ը բավարարվել են Դատարանի կողմից, իսկ 1-ը թողնվել է առանց քննության: Այդ գործով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությանը Դատարանը չի անդրադարձել այն հաշվառմամբ, որ ներկայացված փաստարկների համաձայն՝ հայց հարուցելու ժամկետները բաց թողնված չեն, հետևաբար միջնորդությունն ներկայացնելու անհրաժեշտություն չկա: Բավարարված միջնորդությունների դեպքում Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ Հայցվորը ուշացումով է իմացել վիճարկվող որոշման ընդունման մասին: 9 գործերով (24%) դատավարությանը ներգրավված է եղել նաև երրորդ անձ, որորնցից 6-ի դեպքում Դատարանի որոշումը հասանելի չի եղել դատալեքսում<sup>11</sup>:




Մեկ գործով Պատասխանողը միջնորդություն է ներկայացրել՝ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ, սակայն Դատարանն այդ միջնորդությունը մերժել է<sup>12</sup>: Քանի որ որոշումը հասանելի չէ դատալեքս համակարգում, Դատարանի հիմնավորումը պարզ չէ: Երրորդ անձինք գործերից բոլորի դեպքում ներգրավվել են Դատարանի նախաձեռնությամբ: Հիմնական հիմնավորումը եղել է այն, որ գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով կարող են շոշափվել երրորդ անձանց իրավունքները: Գործերից միայն 2-ի դեպքում է երրորդ անձը մասնակցել դատավարությանը<sup>13</sup>:

<sup>11</sup> ՎԴ/8400/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938637](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938637); ՎԴ/10027/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940335](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940335); ՎԴ/4641/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934826](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934826); ՎԴ6/0041/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933929](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933929)  
<sup>12</sup> ՎԴ/1759/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931722](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931722)  
<sup>13</sup> ՎԴ/8400/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938637](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938637); ՎԴ/4641/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934826](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934826)

Գործերից մեկով<sup>14</sup> Պատասխանողը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդություն՝ դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարելն արգելելը, սակայն Դատարանն այդ միջնորդությունը մերժել է: Քանի որ որոշումը հասանելի չէ դատալեքս համակարգում, Դատարանի հիմնավորումը հայտնի չէ:

Դիտարկված գործերից մեկով տեղի է ունեցել արագացված քննություն՝ հայցն ակնհայտ անհիմն լինելու պատճառով<sup>15</sup>:

Դիտարկված գործերի քննության շրջանակներում հիմնականում նշանակվել են 3-4 նիստեր (59%), ներառյալ՝ վճռի հրապարակումը: Մասնավորապես, 10-ից ավելի նիստ՝ 1 գործով<sup>16</sup>, 5-ից ավելի նիստ՝ 3 գործով, 5 նիստ՝ 6 գործով, 4 նիստ՝ 11 գործով, 3 նիստ՝ 11 գործով, 2 նիստ՝ 5 գործով:



Նախնական նիստեր նշանակվել են գործերից 27-ով (73%): Նախնական նիստերի քանակը եղել է ընդհուպ մինչև 4-ը՝ 2 գործով<sup>17</sup>:

Դիտարկված ժամանակահատվածում չկայացած 6 նիստի պատճառ եղել են դատավորի վատառողջ լինելը (2 նիստ), դատավորի՝ ամենամյա արձակուրդում գտնվելու հանգամանքը (2 նիստ), արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումները (1 նիստ), ջեռուցման բացակայությունը (1 նիստ), դատարան ներկայացված դիմումով հայցվորի ներկայացուցիչի խնդրանքով նշանակված դատական նիստը տեղափոխելը և նշանակելը ավելի վաղ հերթի (1 նիստ)<sup>18</sup>:

Դիտարկված գործերի տևողությունը վարույթ ընդունելու պահից մինչև վճռի հրապարակումը տատանվել է, իսկ ամենաերկար երկու գործը տևել են 1 տարի 1 ամիս<sup>19</sup>: Նշված գործերից մեկը վերաբերել է կադաստրային քարտեզում տվյալներ տեղադրելուն, իսկ մյուսը՝ ինքնակամ շինարարությանը: Մեկ գործով քննությունը տևել է 1 տարի<sup>20</sup>: 15 գործ տևել են 7-ից 9-ը ամիս, 8 գործ՝ 4-5 ամիս, 5 գործ՝ մինչև երեք ամիս և այլն:

<sup>14</sup> ՎՊ/1759/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931722](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931722)

<sup>15</sup> ՎՊ/10027/05/19 [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940335](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940335)


<sup>16</sup> ՎՊ/7316/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937671](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937671)

<sup>17</sup> ՎՊ/2291/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932293](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932293); ՎՊ/4444/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934581](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934581)

<sup>18</sup> ՎՊ/6515/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809936803](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936803)


<sup>19</sup> ՎՊ/7316/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937671](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937671); ՎՊ/1/0010/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930160](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930160)

<sup>20</sup> ՎՊ/1759/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931722](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931722)



Դիտարկված գործերից 36-ով կայացվել է վճիռ, իսկ 1-ով՝ մասով կարճման որոշում, մասով՝ վճիռ<sup>21</sup>: Նշված գործը մի մասով կարճվել է, քանի որ Հայցվորը հրաժարվել է այդ մասով պահանջից:

Դատարանը հայքը վարույթ ընդունելիս 6 գործով կայացրել է վարչական վարույթի նյութերը Պատասխանողից պահանջելու մասին որոշում:



Դիտարկված գործերից 27-ով (73%) Դատարանը վճռում անդրադարձել է Հայցվորի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից ներկայացված յուրաքանչյուր փաստարկին և ապացույցին, իսկ մնացած դեպքերում՝ անդրադարձել է միայն որոշակի փաստարկներին:

3 գործով, ըստ Դատարանի, Հայցվորը կամ վերջինիս ներկայացուցիչը ներկայացրել է փաստեր, որոնց վերաբերյալ ներկայացված չեն եղել ապացույցներ<sup>22</sup>: Հատկանշական է, որ դրանցից երկուսի դեպքում Հայցվորը ներկայացված է եղել փաստաբանի կողմից:

3 գործով Դատարանը գտել է, որ Պատասխանողի ներկայացուցիչը ներկայացրել է փաստեր, որոնց վերաբերյալ ներկայացված չեն եղել ապացույցներ<sup>23</sup>: Նշված գործերից երկուսի դեպքում Պատասխանողի ներկայացուցիչը չի ապահովել ներկայությունը դատավարությանը: Բոլոր 3 գործերով Դատարանն ամբողջությամբ բավարարել է հայքը:


<sup>21</sup> ՎԴ/7316/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809937671](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937671)

<sup>22</sup> ՎԴ/2291/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809932293](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932293); ՎԴ5/0159/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939057](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939057); ՎԴ/1596/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931543](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931543)

<sup>23</sup> ՎԴ2/0257/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410); ՎԴ5/0200/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941734](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941734); ՎԴ5/0051/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931322](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931322)

3 գործով գործի քննության ընթացքում Դատարանը Պատասխանողից պահանջել է ապացույցներ՝ հիմնականում վարչական վարույթի նյութերը<sup>24</sup>: Դիտարկված գործերից մեկով Պատասխանողը կամովին չի կատարել Դատարանի պահանջը, և այն կատարվել է Դատական ակտերի հարկադիր ծառայության միջոցով<sup>25</sup>:

Գործերի մի մասում վճռում առկա են հղումներ ՀՀ սահմանադրությանը (7 գործով), միջազգային պայմանագրերին /Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ)/ (2 գործով), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերին (1 գործով), Սահմանադրական դատարանի որոշումներին (2 գործով), Վճռաբեկ դատարանի որոշումներին՝ 10 գործ:




Դիտարկված գործերից 8-ով<sup>26</sup>, բացի պետական տուրքից, քննարկվել է նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարների հատուցման հարցը, որից բոլոր դեպքում էլ պահանջը բավարարվել է: Վճարի հատուցման ամենախոշոր չափը եղել է 150 000 ՀՀ դրամ: 2 գործով ներկայացվել է դատավարության մասնակցի փոստային ծախսերը հատուցելու պահանջ, որոնք բավարարվել են Դատարանի կողմից:

Դիտարկված գործերից 15-ի (41%) դեպքում Հայցվորը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ազատված է եղել պետական տուրք վճարելու պարտականությունից:


<sup>24</sup> ՎԴ/4641/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934826](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934826); ՎԴ2/0257/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410); ՎԴ/4251/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809934315](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934315)

<sup>25</sup> ՎԴ2/0257/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410)


<sup>26</sup> ՎԴ/9202/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939629](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939629); ՎԴ/0161/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809929904](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929904)



Բացի այդ, գործերից մեկով Հայցվորը ներկայացրել է պետական տուրքի վճարումից հետաձգելու վերաբերյալ միջնորդություն<sup>27</sup>, իսկ մեկ այլ գործով՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդություն<sup>28</sup>: Երկու դեպքում էլ միջնորդությունը բավարարվել է: Երկու դեպքում էլ հաշվի է առնվել հայցվորի գույքային դրությունը:



Դիտարկված գործերից 15-ով (41%) վճիռը բողոքարկվել է, որից 9-ը՝ Հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից, 5-ը՝ Պատասխանողի, իսկ 1-ը՝ երրորդ անձի կողմից:



## II. Վարչարարության իրականացման հետ կապված խնդիրներ

### 2.1. Վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետի խախտում.

<sup>27</sup> ՎԴ/1276/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930979](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930979)

<sup>28</sup> ՎԴ5/0030/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930788](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930788)

Դիտարկված գործերից 5-ով Դատարանն անդրադարձել է վարույթի իրականացման ժամկետների պահպանման խնդրին, որից 4-ի դեպքում արձանագրել է խախտում<sup>29</sup>: Նշված գործերը վերաբերել են վարչական պատասխանատվության ենթարկելուն՝ երկու դեպքում շենքեր և շինություններ ինքնական կառուցելուն, մեկ դեպքում՝ առանց համապատասխան թույլտվության՝ ժամը 24:00-ից հետո աշխատեցնելուն, իսկ մյուս դեպքում՝ առանց թույլտվության՝ բացօթյա առևտրով զբաղվելուն: Նշված գործերով Դատարանն արձանագրել է, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները կայացվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ (ՎԻՎ) ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ: Օրինակ, առանց թույլտվության բացօթյա առևտրով զբաղվելու համար վարչական տույժի ենթարկելու մասին որոշումը վիճարկելու գործով Դատարանը նշել է, որ նշված արարքը հանդիսանում է շարունակվող իրավախախտում, իսկ նշված տեսակի իրավախախտումը բացահայտվելու օրվանից երկամսյա ժամկետը լրանալուց հետո վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման<sup>30</sup>:

Դատարանի գնահատմամբ՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության դիսպոզիցիայով նախատեսված իրավախախտումը շարունակվող իրավախախտում է, քանի որ շինարարական աշխատանքները, որոնց նպատակն է ավարտին հասցնել և ապահովել ինքնական կառույցի շահագործման հնարավորությունը, իրականացվում են որոշակի փուլերով, որոնք առանձին վերցված ինքնուրույն իրավախախտումներ են: Ասվածից հետևում է, որ ինքնական կառույցն ավարտական տեսքի բերելուն ուղղված վերջին գործողության ավարտով իրավախախտումն ավարտվում է, և այս պայմաններում վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետի հոսքը սկսվում է վերջին գործողությունը կատարելու (ավարտելու) օրվանից, իսկ քանի դեռ ինքնական կառույցը ավարտական տեսքի չի բերվել՝ իրավախախտումն ավարտված չէ, այսինքն՝ ժամկետի հոսքը սկսվում է իրավախախտումը բացահայտելու օրվանից<sup>31</sup>:

Այդ գործով, որով վիճարկվել է ինքնական շինարարություն իրականացնելու համար նշանակված վարչական տույժը, Դատարանը գտել է, որ վարույթն իրականացվել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի խախտմամբ, քանի որ գործով ձեռք բերված տվյալներից և վիճարկվող որոշման հիմնավորումներից հետևում է, որ Հայցվորին վերագրված վարչական իրավախախտումն իր բնույթով հանդիսանում է ավարտված վարչական իրավախախտում, քանի որ խոսքը վերաբերում է արդեն իսկ կառուցված շինությանը: Այսինքն, այս պայմաններում վիճարկվող որոշումը ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետներում ընդունված լինելու փաստը չի կարող համարվել հաստատված<sup>32</sup>:

<sup>29</sup> ՎԴ/4941/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930979](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930979); ՎԴ/9360/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939778](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939778); ՎԴ2/0257/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410); ՎԴ5/0051/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931322](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931322)

<sup>30</sup> ՎԴ/9360/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809939778](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809939778)

<sup>31</sup> ՎԴ2/0257/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410)

<sup>32</sup> Նույն տեղում



## *2.2. Փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում.*

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով վարչարարության խնդիրներ առավել հաճախ են հանդիպել: Դիտարկված գործերից 12-ը վերաբերել են ՎԻՎ ՀՀ օրենսգրքով նախատեսված իրավախախտումները կատարելու համար նշանակված վարչական տույժերի վիճարկմանը: Դրանցից 11-ը բավարարվել են ամբողջությամբ:

### *2.2.1. Սուբյեկտի որակում.*

Դիտարկված գործերից մի քանիսով Դատարանը փաստել է, որ Պատասխանող վարչական մարմինները թերացել են զանցակազմի սուբյեկտի որակման հարցում: Նշված խնդիրը հանդիպել է իրավաբանական անձին և իրավաբանական անձի տնօրենին պատասխանատվության ենթարկելու դեպքում: Այս կապակցությամբ Դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի որոշակիության պահանջը վերաբերում է ոչ միայն տրամադրվող կամ սահմանափակվող իրավունքներին, դրվող պարտականությանը, այլ նաև հասցեատիրոջը: Այդպես, դիտարկված գործերից մեկով Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի նյութերի, այդ թվում արձանագրությունների և վիճարկվող որոշման հետազոտումից պարզվել է, որ վարույթը հարուցվել է ընկերության նկատմամբ, և վարչական ակտի հասցեատեր է հանդիսացել հայցվոր ընկերությունը: Նման եզրահանգումը բխում է նաև վիճարկվող վարչական ակտի եզրափակիչ մասի ձևակերպումից: Գործի փաստերի համաձայն՝ վիճարկվող որոշմամբ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասով վարչական պատասխանատվության է ենթարկվել ընկերությունը: Դատարանն ընդգծել է, որ իրավաբանական անձը չի կարող համարվել վարչական իրավախախտման սուբյեկտ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի իմաստով և ենթարկվել պատասխանատվության, ուստի վիճարկվող որոշումն ընդունվել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի վերոնշյալ հոդվածների խախտմամբ<sup>33</sup>:

Մեկ այլ գործով Պատասխանողը կամովին չի կատարել Դատարանի պահանջը՝ ներկայացնել ապացույցներ, արդյունքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գրությամբ դատարանի գրասենյակ է ներկայացվել վիճարկվող որոշումն ընդունելու համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերը: Դատարանն ընդգծել է, որ Պատասխանողի կողմից չներկայացվեցին ապացույցներ (տեսանյութ կամ լուսանկար, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություն, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և այլն), հետևաբար Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով դրա բացասական հետևանքները պետք է կրի պատասխանող կողմը:<sup>34</sup> Հատկանշական է, որ գործերից մեկով Դատարանը փաստել է, որ ընկերությունը /այլ ոչ թե նրա ղեկավարը/ վարչական մարմնի մեկ որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության ՎԻՎ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով: Այդ որոշումը չի վիճարկվել, և այդ հիմքով էլ ոչ ոք իրավունք չունի կասկածելու դրա

<sup>33</sup> ՎԴ/0788/05/20, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809942955](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809942955)

<sup>34</sup> ՎԴ/3050/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933110](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933110)

իրավաչափությանը: Մյուս կողմից, ՎԻՎ օրենսգրքի 14-րդ հոդվածը սահմանում է, որ «պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ»: Ըստ ՎԻՎ որոշման՝ վերը նշված առաջին որոշման մեջ նշված արարքները շարունակվել են կատարվել նույն ընկերության տնօրենի կողմից այն բանից հետո, երբ ընկերությունը ենթարկվել է տուգանքի՝ ՎԻՎ օրենսգրքի 1-ին մասով նախատեսված գանգանքի համար: Քանի որ ընկերության տնօրենն իրականացնում է ընկերության ընթացիկ գործունեությունը /համաձայն ընկերության Կանոնադրության և ՎԻՎ օրենսգրքի 14-րդ հոդվածի/, հետևաբար Դատարանը գտնում է, որ որոշմամբ նշված արարքը /որով վարչական մարմինը տուգանել է ընկերությանը/ հանդիսանում է ընկերության ղեկավարի կողմից կատարված իրավախախտում, այսինքն՝ ընկերության ղեկավարը հանդիսանում է ՎԻՎ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման սուբյեկտ<sup>35</sup>:

### *2.2.3. Ապացույցների հավաքագրում և գնահատում.*

Ինքնակամ շինությունների համար վարչական տույժի ենթարկելու գործերով կարևորագույն նշանակություն ունեն իրավախախտման փաստը և ժամանակը հաստատող լուսանկարները: Սակայն դիտարկված գործերով արձանագրվել է, որ վարչական մարմինները այդ պարտականությունը պատշաճ չեն կատարում: Այդպես, գործերից մեկով Դատարանն արձանագրել է, որ դատարան ներկայացված ողջ վարչական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ չէ, թե ենթադրյալ վարչական իրավախախտման կատարման վայրում կառուցվել է արդյո՞ք շենք կամ շինություն՝ վերագետնյա և ստորգետնյա կառուցվածքներ ունեցող շինարարական օբյեկտ, թե՛ ոչ կամ, առհասարակ, իրականացված աշխատանքների համար արդյո՞ք անհրաժեշտ է շինարարության թույլտվություն, թե՛ ոչ: Ավելին՝ վարչական իրավախախտման վերաբերյալ լուսանկարից պարզ չէ, թե ե՞րբ է կատարվել լուսանկարահանումը և ըստ այդմ՝ չի հիմնավորվում Հայցվորի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ նախատեսված վարչական իրավախախտում թույլ տալու փաստը<sup>36</sup>:

Գործերից մեկով Դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում որոշման մեջ գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը թերի է ներկայացված, քանի որ ըստ էության, պարզ չէ, թե ինչ է նկատի ունեցել վարչական մարմինը՝ նշելով, որ ինքնակամ շինարարական աշխատանքները շարունակվել են: Ավելին՝ գործի քննությամբ ձեռք բերված և հետագոտված վարչական իրավախախտման վերաբերյալ լուսանկարներով չի հիմնավորվում Հայցվորի կողմից իրավախախտում թույլ տալու փաստն առ այն, որ նախ՝ դրանցից պարզ չէ, թե երբ են կատարվել լուսանկարահանումները և ըստ այդմ՝ ՎԻՎ ՀՀ

<sup>35</sup> ՎԴ1/0010/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930160](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930160)

<sup>36</sup> ՎԴ5/0200/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941734](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941734)

օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասով նախատեսված արարքների կատարման ժամանակագրությունը<sup>37</sup>:

### *2.3. Լաված լինելու իրավունքի ապահովում.*

#### *2.3.1. Արձանագրությունը կազմելու պահանջները պահպանելը.*

Դատարանը հայցերի բավարարման հիմքում դրել է նաև արձանագրությունը իրավախախտի բացակայությամբ կազմված լինելը, իրավունքներն ու պարտականությունները բացատրված չլինելը կամ արձանագրության՝ օրենքի պահանջներին չհամապատասխանելը: Հարցի հետ կապված Դատարանը մեջբերել է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործով 22.03.2019թ. կայացրած որոշմամբ արտահայտած դիրքորոշումը՝ միաժամանակ արձանագրելով, որ վարչական մարմինը (պաշտոնատար անձը) իրավասու է իրավախախտին ենթարկել վարչական պատասխանատվության միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու վերոգրյալ ընդհանուր կանոնների, ինչպես նաև արձանագրության բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջների պահպանման պայմաններում:

Բացի ենթադրյալ իրավախախտի բացակայությամբ արձանագրություն կազմելու խնդրից, Դատարանն արձանագրել է նաև, որ որոշ դեպքերում իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը չի համապատասխանում ՎԻՎ ՀՀ օրենսգրքի պահանջներին, ուստի չի կարող համարվել իրավախախտման մասին արձանագրություն և չունի ապացույցի ուժ<sup>38</sup>: Գործերից մեկով Դատարանը, հետազոտելով վարչական վարույթում առկա ապացույցները, արձանագրել է, որ դրանցում առկա չէ վիճարկվող որոշմամբ Հայցվորին վերագրված իրավախախտման կատարման ստույգ ժամանակի վերաբերյալ որևէ ապացույց, իսկ գործում առկա արձանագրությունը չի համապատասխանում օրենքի պահանջներին<sup>39</sup>:

#### *2.3.2. Լսումների մասին ծանուցելը.*

Երկու գործով Դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինը չի ապահովել անձի լաված լինելու իրավունքը, մասնավորապես, պատշաճ չի ծանուցել լսումների մասին<sup>40</sup>: Գործերից մեկով կայացվել են թվով 5 լսումներ, որոնց ծանուցված չլինելու պատճառով հայցվորը չի մասնակցել<sup>41</sup>:

### *2.4. Հայեցողական լիազորության իրացում.*

Գործերից մեկով վարչական մարմինը նույնիսկ անձին տուգանել էր օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափով՝ առանց հիմնավորելու<sup>42</sup>: Դատարանը գտել է, որ վարչական պատասխանատվության ենթարկելը հետապնդում է ոչ թե իրավախախտին

<sup>37</sup> ՎԴ5/0051/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931322](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931322)

<sup>38</sup> ՎԴ2/0257/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940410](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940410)

<sup>39</sup> Նույն տեղում

<sup>40</sup> ՎԴ5/0200/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941734](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941734); ՎԴ/3050/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809933110](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933110)

<sup>41</sup> ՎԴ5/0200/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809941734](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941734)

<sup>42</sup> ՎԴ5/0155/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809938153](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938153)

պատժելու, այլ, ընդհակառակը, ուղղելու և կանխելու նպատակ և յուրաքանչյուր դեպքում վարչական պատասխանատվության ենթարկելիս վարչական մարմինը որպես պատասխանատվության միջոց տուգանք (նվազագույն և առավելագույն չափերի առկայության պայմաններում) կիրառելիս պետք է պարզի ՎԻՎ ՀՀ օրենսգրքով նախատեսված հանգամանքները, քանի որ վարչական իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը ուղղակիորեն կախված է նշված հանգամանքների բացահայտումից, պարզաբանումից, առկայությունից կամ բացակայությունից: Կոնկրետ դեպքում ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 9-րդ պարբերությամբ նախատեսված սանկցիայի տրամաբանությունից ուղղակիորեն բխում է, որ դեռևս տուգանքի նվազագույն կամ առավելագույն չափերի առկայության փաստը չի նշանակում, որ վարչական մարմինը հայեցողություն դրսևորելու հնարավորություն ունի, ընդհակառակը, օրենսդիրը նախատեսել է նվազագույն կամ առավելագույն չափերի ընտրության հնարավորությունը միմիայն ՎԻՎ ՀՀ օրենսգրքով ամրագրված հանգամանքների հաշվառմամբ: Դատարանը փաստել է, որ համայնքը, բավարար համարելով միայն առանց համապատասխան թույլտվության՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման փաստի առկայությունը, Հայցվորին վարչական պատասխանատվության է ենթարկել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 9-րդ պարբերությամբ նախատեսված տուգանքի առավելագույն չափով, ինչը, դատարանի գնահատմամբ, անթույլատրելի է:

## *2.5. Օրինականության սկզբունքի ապահովում. Լիազորությունների զանցում.*

Գործերից մեկով Դատարանն արձանագրել է, որ համայնքի ղեկավարը, Հայցվորին տալով համապատասխան շինարարական թույլտվություն, հետագայում այն դադարեցրել է: Այս դեպքում Դատարանը հաստատել է, որ շինարարական թույլտվություն տալուց հետո համայնքի ղեկավարն այլևս չէր կարող դադարեցնել դրա գործողությունը, քանի որ նախ՝ օրենքով նման լիազորություն նրան վերապահված չէ, երկրորդ՝ շինարարության թույլտվության գործողությունը դադարեցնելու հնարավորություն որևէ օրենքով նախատեսված չէ: Ընդ որում, թեպետ շինարարության թույլտվության գործողությունը դադարեցնելու իրավական հիմք պատասխանողը նշել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, որի համաձայն՝ համայնքի ղեկավարը նույն օրենքով սահմանված կարգով իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ, Դատարանն արձանագրել է, որ համայնքի ղեկավարի նշված լիազորությունը նշված է համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունների շարքում, և դրանով սահմանվում է համայնքի ղեկավարի կողմից ընդհանրապես որոշումների կայացման իրավական հնարավորություն: Ընդ որում, նման որոշումները պետք է կայացվեն համայնքի ղեկավարի իրավասության սահմաններում, մինչդեռ շինարարության թույլտվության գործողության դադարեցման վերաբերյալ որոշման կայացումը համայնքի ղեկավարի իրավասության մեջ չի մտնում<sup>43</sup>:

<sup>43</sup> ՎԴ/1759/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931722](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931722)

Մեկ այլ գործով վիճարկվող որոշմամբ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածով, որոշել է Հայցվորի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 5.000 ՀՀ դրամի չափով: Այս կապակցությամբ Դատարանը նշել է, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի սանկցիայի շրջանակներում նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով տուգանք սահմանված չէ: Երկրորդ՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 230-րդ և 237-րդ հոդվածների վերապահումով ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու իրավասություն ունեն Առողջապահական տեսչական մարմինը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության պետական վարչության սանիտարական հսկողություն իրականացնող բժշկական ծառայությունները: Դատարանը նշել է, որ մի կողմից՝ գործը քննող տեղական ինքնակառավարման մարմինը կիրառել է պատասխանատվության միջոց, որը նախատեսված չէ որոշմամբ վկայակոչված նորմով, մյուս կողմից՝ իրավասու չէ այդ նորմով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննել, ինչով պայմանավորված հստակ չէ, թե վարչական ակտի հասցեատիրոջ վրա կոնկրետ ինչ պարտականություն է դրվում<sup>44</sup>:

#### *2.6. Լիազորությունների բացակայություն, օրենքի բացեր.*

Դիտարկված գործերից կարելի է առանձնացնել երկու խումբ, որոնք առաջացել են օրենքով որևէ մարմնին համապատասխան լիազորություն չվերապահելու արդյունքում:

Այսպես, աղետի գոտու բնակավայրում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների /բնակարանների/ հատկացման նպատակով 2008 թվականի նոյեմբերի 1-ից հետո քաղաքացիներին հերթացուցակում հաշվառելու իրավասություն որևէ իրավական ակտով որևէ մարմնի վերապահված չէ, և հարցը ենթակա է կարգավորման դատական կարգով<sup>45</sup>:

Երկրորդ խումբ գործերը վերաբերել են հաստատող փաստաթղթերի չպահպանման պայմաններում հողհատկացման հանգամանքի հաստատմանը: Նշված 7 գործերով Պատասխանող համայնքները լրիվ ընդունել են պահանջը, քանի որ դատական կարգով այդ հարցը լուծելը միակ գործուն մեխանիզմն է: Հատկանշական է, որ դիտարկված գործերից մեկով Դատարանը, թեև Պատասխանողը լրիվ ընդունել է պահանջը, մերժել է հայցը՝ նկատի ունենալով, որ վարչական դատարանն իրավասու չէ պարտավորեցնել վարչական մարմնին ընդունել այնպիսի վարչական ակտ, որի ընդունման համար անհրաժեշտ փաստական հիմքերը հաստատված չեն գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներով, իսկ սույն գործում բացակայել են հողամասի վերաբերյալ հողհատկացման հիմքերը վերականգնելուն պարտավորեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը<sup>46</sup>:

<sup>44</sup> ՎԴ2/0265/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809940856](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809940856)

<sup>45</sup> ՎԴ5/0013/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809930462](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930462)

<sup>46</sup> ՎԴ/1596/05/19, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=38562071809931543](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809931543)

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Վերլուծությունը վկայում է, որ ՀՀ տարբեր համայնքների դեմ բերված գործերով վարչարարության խնդիրներ առավել հաճախ հանդիպում են վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով, հատկապես՝ շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու վերաբերյալ գործերով:

Ընդհանուր առմամբ, Դատարանի կողմից արձանագրվել են փաստական հանգամանքների լրիվ և բազմակողմանի քննարկում չիրականացնելու, լսված լինելու իրավունքը չապահովելու, վարչական վարույթի շրջանակներում հավաքագրված և գնահատված ապացույցների որակի հետ կապված խնդիրներ: Բացի այդ, մի շարք գործերով Դատարանն արձանագրել է լիազորությունների անցման, առանց իրավասության և/կամ հիմքի պատժամիջոցների կիրառման դեպքեր:

Արձանագրված խախտումների զգալի մասից հնարավոր կլինեն խուսափել՝ վարչական մարմնի կողմից վարչարարության, օրինականության և որոշակիության սկզբունքների պահպանման դեպքում:

## Առաջարկություններ

- Բացառել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ վարչական վարույթի հարուցումը և անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը:

- Միջոցներ ձեռնարկել ապահովելու վարչական մարմնի կողմից վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը, այդ թվում՝ արձանագրությունը իրավախախտի ներկայությամբ կազմելը, իրավունքներն ու պարտականությունները բացատրելը և արձանագրության՝ օրենքի պահանջներին համապատասխանելը բովանդակային առումով, ապահովել վարույթի մասնակիցների՝ լսումների մասին պատշաճ ծանուցված լինելու իրավունքը:

- Ամփոփել դատական պրակտիկան, վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության խնդիրները, ապահովել վարչարարություն իրականացնող անձանց իրազեկվածությունը դրանց մասին՝ թույլ չտալու վարչարարության այնպիսի խնդիրներ, որոնց վերաբերյալ առկա է հաստատված դատական պրակտիկա:

- Ապահովել վարչարարություն իրականացնող աշխատակիցների իրազեկվածությունը ոլորտին վերաբերելի իրավական ակտերին և դրանց փոփոխություններին:

- Ապահովել հայեցողական լիազորություն իրացնելիս, այդ թվում՝ վարչական իրավախախտման համար վարչական տույժի չափը որոշելիս վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքների պահպանումը:

- Իրականացնել վարչական մարմինների աշխատակիցների պարբերական վերապատրաստումներ, այդ թվում՝ ծանոթացնելով հաճախ հանդիպող խնդիրներին, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին, ձևավորված դատական պրակտիկային: